ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2

Ք. Երևան «8» հունիսի 2021 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Սուքիասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Ավան, Դավթաշեն և Նոր Նորք վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ըստ տեղնիկական բնութագրի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **101,728,143 (հարյուր մեկ միլիոն յոթ հարյուր քսանութ հազար հարյուր քառասուներեք)** ՀՀ դրամ, որից **16,954,690.5 (տասնվեց միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր իննսուն և 50 լումա)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Դավթաշեն վարչական շրջան,

Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերրորդական) տոկոսի չափով:

Ավան վարչական շրջան,

Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

Նոր Նորք վարչական շրջան

Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3

Ավան վարչական շրջան

Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում

Դավթաշեն վարչական շրջան

Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում

Նոր Նորք վարչական շրջան

Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 15 (տասնհինգ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի թվով Ավան, Դավթաշեն և Նոր Նորք վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմը**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
/ստորագրություն/
Կ.Տ

Կապալառու
«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
ի/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500257094970
ՀՎՀՀ 02648403

Հ.Սուքիասյան ----------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 8 » հունիսի 2021 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների

Հ. Հովհաննիսյան թաղամաս 29 շ, 24/2 շ, 25/2 շ.
Խուդյակովի փողոց 68/1 շ.
Իսահակյան թաղամաս 3/2 շ, 2/2 շ, 3/3 շ.
Դ. Վարուժան թաղամաս 5 շ.
Թումանյան թաղամաս 13/3 շ.
Նարեկացի թաղամաս 31 շ.
Քուչակ թաղամաս 47 շ, 20 շ, 14 շ, 19 շ, 22 շ.
Դուրյան թաղամաս 42 շ, 46 շ, 38 շ, 47 շ, 28 շ, 49 շ, 47 շ.
Չարենց թաղամաս 13 շ, 10 շ, 16 շ, 14 շ.
Աճառյան փողոց 44 շ, 22 շ.
Ավան-Առինջ թաղամաս 1 մկշ. 3/10 շ, 2/11 շ, 1/10 շ, 3 շ, 3/7 շ, 1/4 շ, 2/12 շ, 1/11 շ, 4/2 շ, 4 շ.
Ավան-Առինջ թաղամաս 2 մկշ. 2/4 շ, 1/7 շ, 2/3 շ, 2/5 շ, 1/13 շ, 1/1 շ.
Ավան-Առինջ թաղամաս 1 մկշ. թիվ 56 մանկապարտեզ
Բաբաջանյան փողոց, Ավանի մշակույթի տուն
Սայաթ-Նովա թաղամաս 7 շ.
Բրյուսով թաղամաս 63 շ.

N	Աշխատանքների անվանումը	չ/մ	ք	Միավորի արժեքը	գումար /հազար դրամ/
	Քանդման աշխատանքներ				
1	Ջրամեկուսիչ շերտի քանդում	ք.մ.	3,200.00	0.208	665.239
2	Քայքայված ց/ավազե շերտի քանդում	ք.մ.	1,372.00	0.208	285.221
3	Եզրապատերի մետաղական թիթեղների քանդում	ք.մ.	50.00	0.156	7.796
4	Ապամոնտաժված նյութերի հավաքում, իջեցում տանիքից և դուրս բերում շենքից	տն	68.58	1.559	106.927
5	Շինաղբի բարձում ավտոմեքենա և տեղափոխում Նուբարաշենի խճուղուն հարող աղբավայր	տն	68.58	1.559	106.927
	Ընդամենը	**5.63%**			**1,172.110**
	Վերանորոգման աշխատանքներ				

1	Ցեմենտ ավազյա հարթ շերտի իրականացում 3-5 սմ. հաստ.	ք.մ.	1,372.00	1.975	2,709.055
2	Ջրահեռցման ծագարների ապամենտաժում և վերատեղադրում	հատ	5.00	3.462	17.311
3	Եզրապատերի սվաղի նորոգում	ք.մ.	59.01	1.919	113.217
4	Եզրապատերի երեսպատում ցինկապատ մետաղյա թիթեղով /0,5/	ք.մ.	50.00	4.678	233.890
5	Ջրամեկուսիչ գորգի մեկ շերտ իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով՝ վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով /հաստությունը 3մմ և ավելի, 1քմ զանգվածը 4կգ և ավելի, ջերմաճկունությունը -(25-15)C,+(70-85)C	ք.մ.	2,560.00	1.958	5,012.156
6	Ջրամեկուսիչ գորգի երկշերտ իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով՝ ներքին շերտի հաստությունը 2,5մմ և ավելի, պատված պոլիմերային թաղանթով, 1քմ-ի զանգվածը 3կգ և ավելի, վերին շերտի հաստությունը 3մմ և ավելի, պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով, 1քմ-ի զանգվածը 4կգ և ավելի, ջերմաճկունությունը -(25-15)C,+(70-85)C	ք.մ.	3,200.00	3.584	11,467.715
7	Օդափոխության հորանների ծածկի իրականացում ցինկապատ մետաղյա թիթեղով (0,5մմ)	ք.մ.	20.00	4.678	93.556
	Ընդամենը	**94.37%**			19,646.902
	Ընդամենը				20,819.012
	ԱԱՀ 20 %				**4,163.802**
	Ընդամենը				**24,982.814**

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների

Հ. Հովհաննիսյան թաղամաս 29 $_2$, 24/2 $_2$, 25/2 $_2$.
Խուդյակովի փողոց 68/1 $_2$.
Իսահակյան թաղամաս 3/2 $_2$, 2/2 $_2$, 3/3 $_2$.
Դ. Վարուժան թաղամաս 5 $_2$.
Թումանյան թաղամաս 13/3 $_2$.
Նարեկացի թաղամաս 31 $_2$.
Քուչակ թաղամաս 47 $_2$, 20 $_2$, 14 $_2$, 19 $_2$, 22 $_2$.
Դուրյան թաղամաս 42 $_2$, 46 $_2$, 38 $_2$, 47 $_2$, 28 $_2$, 49 $_2$, 47 $_2$.
Չարենց թաղամաս 13 $_2$, 10 $_2$, 16 $_2$, 14 $_2$.
Աճառյան փողոց 44 $_2$, 22 $_2$.
Ավան-Առինջ թաղամաս 1 մկ$_2$. 3/10 $_2$, 2/11 $_2$, 1/10 $_2$, 3 $_2$, 3/7 $_2$, 1/4 $_2$, 2/12 $_2$, 1/11 $_2$, 4/2 $_2$, 4 $_2$.
Ավան-Առինջ թաղամաս 2 մկ$_2$. 2/4 $_2$, 1/7 $_2$, 2/3 $_2$, 2/5 $_2$, 1/13 $_2$, 1/1 $_2$.
Ավան-Առինջ թաղամաս 1 մկ$_2$. թիվ 56 մանկապարտեզ
Բաբաջանյան փողոց, Ավանի մշակույթի տուն

Սայաթ-Նովա թաղամաս 7 շ.
Բրյուսով թաղամաս 63 շ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Ջրամեկուսիչ շերտի քանդում:
2. Քայքայված ց/ավազե շերտի քանդում
3. Եզրապատերի մետաղական թիթեղների քանդում
4. Ապամոնտաժված նյութերի հավաքում, իջեցում տանիքից և դուրս բերում շենքից
5. Շինաղբի բարձում ավտոմեքենա և տեղափոխում Նուբարաշենի խճուղուն հարող աղբավայր
6. Ցեմենտ ավազյա հարթ շերտի իրականացում 3-5 սմ. հաստ.
7. Ջրահեռցման ձագարների ապամենտաժում և վերատեղադրում
8. Եզրապատերի սվաղի նորոգում
9. Եզրապատերի երեսպատում ցինկապատ մետաղյա թիթեղով /0,5/
10. Ջրամեկուսիչ գորգի մեկ շերտ իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով՝ վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով /հաստությունը 3մմ և ավելի, 1քմ զանգվածը 4կգ և ավելի, ջերմաճկունությունը -(25-15)C,+(70-85)C
11. Ջրամեկուսիչ գորգի երկշերտ իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով՝ ներքին շերտի հաստությունը 2,5մմ և ավելի, պատված պոլիմերային թաղանթով, 1քմ-ի զանգվածը 3կգ և ավելի, վերին շերտի հաստությունը 3մմ և ավելի, պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով, 1քմ-ի զանգվածը 4կգ և ավելի, ջերմաճկունությունը -(25-15)C,+(70-85)C
12. Օդափոխության հորանների ծածկի իրականացում ցինկապատ մետաղյա թիթեղով (0,5մմ)
13. Աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օրացուցային օր:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին և տեխնիկական պայմաններին համապատասխան:

Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթերի /սերտիֆիկատներ, տեխնիկական անձնագրեր, լաբորատոր ստուգման և փորձարկման մասին հաշվետվություններ և այլն/ համապատասխանելիությունը գործող ստանդարտներին, տեխնիկական և այլ նորմատիվային պահանջներին:

Ծավալաթերթ- նախահաշիվ

2021թ Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանքիների վերանորոգման աշխատանքներ

<u>Դավթ. 1-ին թաղ</u>.- 5շ. 12 բն, 10ա2. /1, 2, 3 վ.տ/, 11շ. 17բն., 30շ. 35, 36բն, 6շ. 54բն., 15շ. 18բն, h 61 մանկապարտեզ

<u>Դավթ. 2-րդ թաղ</u>. -20շ./թիթեղ/, 25շ. 44բն., 33շ. 36բն. /անձրևատար/, 41շ. 33բն. /անձրևատար/, 40շ. /1վ.տ/, 45շ. /1վ.տ/, 39շ. 17բն., 17շ. 50բն. /վ.տ/, 21շ. 52բն., 32շ. 36բն., 13շ. 49բն. /թիթեղ/, 3շ. 53բն., 6շ. 51բն. /վ.տ/, h 59 մանկապարտեզ

<u>Դավթ. 3-րդ թաղ</u>. - 25շ. 71բն., Հալաբյան 48շ. 31 բն., 22շ. 36բն., h 60 մանկապարտեզ

<u>Դավթ. 4-րդ թաղ</u>.- 17շ. 36բն., 48շ. 35բն., 26շ. 50բն., 33շ. 54բն., 31շ. 35բն., 43շ. 36բն., 47շ. 33, 34, 35, 36բն., 21շ. 72բն., h 62 մանկապարտեզ

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդանուր արժեք (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ				
1	Ջրամեկուսիչ շերտի քանդում	$մ^2$	1,050.00	0.170	178.669
2	Ցեմ. ավազե հարթեցնող շերտի քանդում	$մ^2$	200.00	0.170	34.032
3	Պարապետի մետաղական թիթեղների քանդում	$մ^2$	453.00	0.128	57.812
4	Շին աղբի բարձում և տեղափոխում 12 կմ հեռավորության վրա	տ	27.00	2.552	68.915
	Ընդամենը	1.63%			339.429
	Վերանորոգման աշխատանքեր				
1	Ցեմ. ավազե հարթեցնող շերտի իրականացում 3 սմ հաստությամբ	$մ^2$	240	1.972	473.369
2	Եզրապատերի սվաղի նորոգում	$մ^2$	140	1.820	254.787
3	Պարապետի երեսպատում ցինկապատ մետաղյա թիթեղով (0,5մմ)	$մ^2$	500	4.692	2,345.928
4	Ջերմամեկուսիչ գորգի մեկ շերտ իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով: Վերին շերտը պատված բազալտե խոշորհատիկ ծածկույթով:Հաստությունը 3մմ և ավելի ,1քմ զանգվածը՝ 4կգ և ավելի,ջերմաճկունությունը՝---(25-15)C ,+(70-85)C	$մ^2$	8567.2	1.964	16,823.254
5	Փայտե կոնստրուկցիաների տեղադրում /ստրոպիլա/ Բաղալյան նախագիծ	$մ^3$	2	223.183	446.367
6	Օդափոխության հորանների ծածկի իրականացում ցինկապատ մետաղյա թիթեղով (0,5մմ)	$մ^2$	30	4.692	140.756
	Ընդամենը	98.37%			20,484.461

	Ընդամենը		20,823.891
	ԱԱՀ 20%		4,164.778
	Ընդամենը		24,988.669

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2021թ Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան բնակելի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ

Դավթ. 1-ին թաղ.- 5_2. 12 բն, $10_{ա2}$. /1, 2, 3 վ.տ/, 11_2. 17բն., 30_2. 35, 36բն, 6_2. 54բն., 15_2. 18բն, h 61 մանկապարտեզ
Դավթ. 2-րդ թաղ. -20_2./թիթեղ/, 25_2. 44բն., 33_2. 36բն. /անձրևատար/, 41_2. 33բն. /անձրևատար/, 40_2. /1վ.տ/, 45_2. /1վ.տ/, 39_2. 17բն., 17_2. 50բն. /վ.տ/, 21_2. 52բն., 32_2. 36բն., 13_2. 49բն. /թիթեղ/, 3_2. 53բն., 6_2. 51բն. /վ.տ/, h 59 մանկապարտեզ
Դավթ. 3-րդ թաղ. - 25_2. 71բն., Հալաբյան 48_2. 31 բն., 22_2. 36բն., h 60 մանկապարտեզ
Դավթ. 4-րդ թաղ.- 17_2. 36բն., 48_2. 35բն., 26_2. 50բն., 33_2. 54բն., 31_2. 35բն., 43_2. 36բն., 47_2. 33, 34, 35, 36բն., 21_2. 72բն., h 62 մանկապարտեզ

Պետք է իրականացվեն Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ:

1. Ջրամեկուսիչ շերտի քանդում
2. Ց/ավազե հարթեցնող շերտի քանդում
3. Պարապետի մետաղական թիթեղների քանդում
4. Ց/ավազե հարթեցնող շերտի իրականացում՝ 3սմ հաստությամբ
5. Եզրապատերի սվաղի նորոգում
6. Պարապետի երեսապատում ցինկապատ մետաղական թիթեղով 0.50մմ
7. Ջերմամեկուսիչ գորգի մեկ շերտ իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով՝ վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով /հաստությունը 3մմ և ավելի, 1քմ-ի զանգվածը 4կգ և ավելի, ջերմաճկունությունը –(15-25)C, +(70-85)C ներառյալ նյութի բարձրացումը տանիք/:
8. Փափուկ ծածկույթի եզրերը պետք է իրար ծածկեն 5-10սմ
9. Իրականացնել ջերմամեկուսիչ մեկ շերտ երեսպատում օդափոխության հորանների և վերելակի մեքենայական սենյակի պատերի հետ տանիքի միացման հանգույցներում /4մմ հաստությամբ /
10. Իրականացնել 0.50մմ հաստությամբ ցինապատ մետաղյա թիթեղով օդափոխության հորանների ծածկերի տեղադրման աշխատանքներ
11. Շինարարական աղբի բարձում և տեղափոխում /մինչև 12կմ հեռ. վրա/
12. Տանիքում մաքրության ապահովում շինաշխատանքների կատարման ընթացքում և ավարտից հետո
13. Փայտե կոնստրուկցիաների տեղադրում /ստրոպիլա/ Բադալյան նախագիծ
14. Աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օրացուցային օր:

Տեխնիկական առաջադրանք

Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին և տեխնիկական պայմաններին համապատասխան :

Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շնարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթերի /սերտիֆիկատներ, տեխնիկական անձնագրեր, լաբորատոր ստուգման և փորձարկման մասին հաշվետվություններ և այլն / համապատասխանելիությունը գործող ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին:

Նոր Նորք վարչական շրջանի թվով 43 շենքերի հարթ տանիքների ընթացիկ վերանորոգման աշխատանքների

1)Նանսենի 6, 2) Գայի 13, 3)Գայի 11, 4) Գայի 1, 5) Մոլդովական 17, 6) Մոլդովական 15, 7)Բաղյան 1, 8)Բաղյան 1նրբ 6, 9)Բակունցի 1 նրբ 3, 10)Գուլիքևխյան 29, 11)Բակունցի 2 նրբ 5, 12)Գուլիքևխյան 19, 13)Բակունցի 8, 14)Գուլիքևխյան նրբ 1, 15)Գուլիքևխյան 25/2, 16)Բ. Մուրադյան 7, 17)Կարախանյան 1, 18)Ավետիսյան-29, 19)Ավետիսյան 58, 20)Կարախանյան 2, 21)Ավետիսյան 46, 22)8զ-34, 23)Մինսկի 51, 24)8զ -2, 25)Վիլնյուսի 85, 26)Վիլնուսի 23, 27)Վիլնյուսի 9, 28)Վիլնյուսի 87, 29)Ստեփանյան 18, 30)Բանավան 16, 31)Ավետիսյան-59, 32)Ավետիսյան- 53, 33)Վիլնյուսի 71, 34)Վիլնյուսի-115, 35)Գալշոյան 26, 36)Բ. Մուրադյան 3, 37)Վիլնյուսի 67, 38)Քոչարյան 32,39)8զ-16, 40)8զ-20, 41)Հովհաննիսյան 18, 42)Հովհաննիսյան 8/1, 43)Հովհաննիսյան 16,

Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ - Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Հազ. դրամ

Աշխատանքի անվանումը	չափման միավոր	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
Ջերմամեկուսիչ շերտի քանդում	քմ	5,500.00	0.183	1,007.050
Ցեմենտ ավազե հարթեցնող շերտի քանդում	քմ	3,100.00	0.183	567.610
Պարապետի մետաղական թիթեղների քանդում	քմ	250.00	0.137	34.331
Շինաղբի բարձում ձեռքով և տեղափոխում Նուբարաշենի խճուղուն հարող աղբավայր	տն	145.00	2.747	398.243
Ցեմենտ ավազե շերտի իրականացում 3-5 սմ հաստ	քմ	3,100.00	2.207	6,842.662
Եզրապատերի սվաղի նորոգում	քմ	100.00	1.778	177.796
Պարապետի երեսապատում ցինկապատ մետաղական թիթեղով /0,5մմ /	քմ	250.00	4.641	1,160.321
Ջրամեկուսիչ գորգի մեկ շերտ իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով՝ վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով /հաստությունը 3մմ և ավելի, 1քմ-ի զանգվածը 4 կգ և ավելի ջերմաճկունությունը -(25-15)C, +(70-85)C	քմ	6,750.00	1.900	12,822.321

Ջրամեկուսիչ գորգի երկշերտ իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով /ներքին շերտի հաստությունը 2.5մմ և ավելի, 1քմ-ի զանգվածը 3 կգ և ավելի , վերին շերտի հաստությունը 3մմ և ավելի,պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով, 1քմ-ի զանգվածը 4կգ և ավելի, ջերմաճկունությունը -(25-15)C, +(70-85)C	քմ	5,500.00	3.551	19,530.775
Օդափոխության հորանների ծածկի իրականացում ցինկապատ մետաղյա թիթեղով 0.5մմ	քմ	127.00	4.641	589.443
Ընդամենը				**43,130.550**
ԱԱՀ 20 %				**8,626.110**
Ընդամենը				**51,756.660**

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի շենքերի հարթ տանիքների ընթացիկ վերանորոգման համար պետք է իրականացվեն.

1)Նանսենի 6, 2) Գայի 13, 3)Գայի 11, 4) Գայի 1, 5) Մոլդովական 17, 6) Մոլդովական 15, 7)Բաղյան 1, 8)Բաղյան 1նրբ 6, 9)Բակունցի 1 նրբ 3, 10)Գուլիքևխյան 29, 11)Բակունցի 2 նրբ 5, 12)Գուլիքևխյան 19, 13)Բակունցի 8, 14)Գուլիքևխյան նրբ 1, 15)Գուլիքևխյան 25/2, 16)Բ. Մուրադյան 7, 17)Կարախանյան 1, 18)Ավետիսյան-29, 19)Ավետիսյան 58,20)Կարախանյան 2, 21)Ավետիսյան 46, 22)8q-34, 23)Մինսկի 51, 24)8q -2, 25)Վիլնյուսի 85, 26)Վիլնուսի 23, 27)Վիլնյուսի 9, 28)Վիլնյուսի 87, 29)Ստեփանյան 18, 30)Բանավան 16, 31)Ավետիսյան-59, 32)Ավետիսյան- 53, 33)Վիլնյուսի 71, 34)Վիլնյուսի-115, 35)Գալշոյան 26, 36)Բ. Մուրադյան 3, 37)Վիլնյուսի 67, 38)Քոչարյան 32,39)8q-16, 40)8q-20, 41)Հովհաննիսյան 18, 42)Հովհաննիսյան 8/1, 43)Հովհաննիսյան 16,

Ջերմամեկուսիչ շերտի քանդում:

Ցեմենտավազե հարթեցնող շերտի քանդում:

Պարապետի մետաղական թիթեղների քանդում:

Շինաղբի բարձում ձեռքով և տեղափոխում Նուբարաշենի խճուղուն հարող աղբավայր

Ցեմենտ ավազե շերտի իրականացում 3-5 սմ հաստ:

Եզրապատերի սվաղի նորոգում:

Ջրամեկուսիչ գորգի մեկ շերտ իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով/հաստությունը 3մմ և ավելի, 1քմ-ի զանգվածը 4 կգ և ավելի ջերմաճկունությունը -(25-15)C, +(70-85)C:

Ջրամեկուսիչ գորգի երկշերտ իրականացում պոլիէսթերային կտորի հիմքով /ներքին շերտի հաստությունը 2.5մմ և ավելի, 1քմ-ի զանգվածը 3 կգ և ավելի , վերին շերտի հաստությունը 3մմ և ավելի վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով, 1քմ-ի զանգվածը 4կգ և ավելի, ջերմաճկունությունը -(25-15)C, +(70-85)C

Օդափոխությանհորաններիծածկիիրականացումցինկապատմետաղյաթիթեղով 0.5մմ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1.Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան,

Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթեր (տեխնիկական անձնագրեր և այլ) և դրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին:

3. Սահմանված կարգով կազմել ծածկված աշխատանքների ակտերը, շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ կատարել բոլոր անհրաժեշտ փորձարկումները՝ կազմելով դրանց ակտերը:

4. Կապալառուն պարտավոր է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում կազմված նախահաշվում ներառված գնի սահմաններում Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնել օբյեկտում օգտագործվելիք նյութերի նմուշները, ներկայացնելով նաև դրանց գինը հիմնավորող փաստաթղթերը և սերտիֆիկատները:

Վերոգրյալ ժամկետի կամ պայմանի խախտման դեպքում նույն նախահաշվային գնի սահմաններում Կապալառուն պարտավոր է ձեռք բերել վերոգրյալ նյութերը Պատվիրատուի ընտրությամբ:

5.Աշխատանքների երաշխիքային ժամկետ սահմանել երեք տարի

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
/ստորագրություն/
Կ.Տ

Կապալառու
«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
հ/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500257094970
ՀՎՀՀ 02648403

Հ.Սուքիասյան----------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 8 » հունիսի 2021 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ» **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
2	**Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ**	Պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանգիրը վավերացնելու օրվանից	01.12.2021թ
4	**Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ**	Պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանգիրը վավերացնելու օրվանից	31.08.2021
7	**Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ**	Պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանգիրը վավերացնելու օրվանից	90 աշխատանքային օր
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
/ստորագրություն/
Կ.Տ

Կապալառու
«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
ի/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500257094970
ՀՎՀՀ 02648403

Հ.Սուքիասյան ----------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 8 » հունիսի 2021 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Կենտրոնական գնահատող	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45261124/38	Հ/Հ 900032479140	**Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ**	-	-	-	-	-	12 000 000	24 000 000	24 000 000	24 000 000	24 982 814	24 982 814	24 982 814	24 982 814
4	45261124/17	Հ/Հ 900052476323	**Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ**	-	-	-	-	-	11 760 000	23 519 800	23 519 800	23 519 800	24 988 669	24 988 669	24 988 669	24 988 669

7	45261124/11	Հ/Հ 900032098502	**Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ**	—	—	—	—	—	23 500 000	47 000 000	47 000 000	47 000 000	51 756 660	51 756 660	51 756 660	51 756 660

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
/ստորագրություն/
Կ.Տ

Կապալառու
«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
հ/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500257094970
ՀՎՀՀ 02648403

Հ.Սուքիասյան----------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 7 » հունիսի 2021 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ
հ/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500257094970
ՀՎՀՀ 02648403

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
« 8 » հունիսի 2021 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2>> գնման պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՏԵՐՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ "ТЕРЯН"
"ARMBUSINESSBANK" CJSC
"TERYAN" BRANCH

N 1472-48

«08» 06 2021թ.

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից *N* **«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29»** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ**-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք *N* **«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2»** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **15,259,222.00 (տասնհինգ միլիոն երկու հարյուր հիսունինը հազար երկու հարյուր քսաներկու) ՀՀ դրամը չգերազանցող գումար** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև *N* **«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2»** ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից **մինչև 30.05.2022 թվականը ներառյալ**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ***«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2»*** *ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.*

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնաճյուղի կառավարիչ **Արթուր Պարսեղյան**

ՀՍԴԳ բաժնի պետ **Մարինա Բարսեղյան**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 69; Հեռախոս՝ (+37460) 37 25 48; Էլ.փոստ՝ teryan@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: РА, г. Ереван, Теряна 69; Телефон: (+37460) 37 25 48;

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՏԵՐՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “ТЕРЯН”
“ARMBUSINESSBANK” CJSC
“TERYAN” BRANCH

N 1471-48

«08» 06 2021թ.

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ**-ի միջև կնքվելիք *N* **«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2»** պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **10,172,815.00 (տասը միլիոն մեկ հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամը չգերազանցող գումար** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք *N* **«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2»** պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից **մինչև 30.05.2023 թվականը ներառյալ**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ***«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-2»*** *պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.*

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնաճյուղի կառավարիչ **Արթուր Պարսեղյան**

ՀՍԴԳ բաժնի պետ **Մարինա Բարսեղյան**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 69; Հեռախոս՝ (+37460) 37 25 48; Էլ.փոստ՝ teryan@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: РА, г. Ереван, Теряна 69; Телефон: (+37460) 37 25 48;